

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» փետրվարի 2014թ.

N 5-Ն

ք. Ստեփանակերտ

ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՑՈՂ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԻ,
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ^{*4)} ՎՃԱՐԻ, ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ՀԱՐԿԱՅԻՆ
ԳՈՐԾԱԿԱԼ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՊԱՀՈՒՄ (ԳԱՆՁՈՒՄ) ԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ)
ԿՈՂՄԻՑ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՐԿԱԾ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ, ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԱՀՎԱԾ
ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՐԾԱՏՈՒԻ (ՎԱՐՁՈՒ)
ԱՇԽԱՏՈՂԻ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ^{*4)} ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՏԵՂԵԿԱԼՔԻ^{*2),*4)} ՈՒ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ
ԱՆՁՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՍՏԱՑԱԿԱՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Սահմանել՝

1) վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական
անձի անհատական տվյալների գրանցման հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) եկամտային հարկի և սոցիալական^{*4)} վճարի ամսական ամփոփ հաշվարկի
ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) եկամտային հարկի և *սոցիալական*^{*4)} վճարի ամսական պարզեցված հաշվարկի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) տարեկան եկամուտների մասին հաշվարկի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) կազմակերպության կողմից որպես հարկային գործակալ եկամտային հարկի պահում (գանձում) և պետական բյուջե վճարում կատարելու պարտավորություն ստանձնելու մասին հայտարարության ձևը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների և պահված եկամտային հարկի գումարների, ինչպես նաև գործատուի (վարձու) աշխատողի համար կատարված *սոցիալական*^{*4)} վճարների մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) *(ուժը կորցրած է ճանաչվել)* ^{*2),*4)}

8) գրանցման հայտի և եկամտային հարկի անձնավորված հաշվարկի ընդունման մասին ստացականների ձևերը՝ համաձայն N 8 և N 9 հավելվածների:

Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ԲԱԼԱՅԱՆ

Համաձայնեցված է
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
 «18» փետրվարի 2014թ.
 _____ Ս. Թևոսյան

Հավելված N 1
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարությանն առընթեր հարկային
 պետական ծառայության պետի
 «17» փետրվարի 2014թ.

N 5-Ն հրամանի

Ձև

Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի ձև	Փաստաթղթի մուտքագրման համար (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	2. Հարկ վճարողի (գործատուի) անվանում (անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն)
	Հայտի ներկայացման ամսաթիվ

1) «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է գործատուի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, [1] տողում ինքնաշխատ լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը, [2] տողում («Հարկ վճարողի (գործատուի) անվանում») տողում ինքնաշխատ լրացվում է կազմակերպության անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

Բաժին I. Անձնավորված տեղեկություններ

Հ/հ	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	Ծննդյան ամսաթիվ	Անձը հաստատող փաստաթուղթ	
						տեսակ	սերիա և համար
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8

2) 1.1 դաշտում ինքնաշխատ լրացվում է աշխատողի հերթական համարը

3) 1.2 - 1.4 սյունակներում լրացվում են աշխատող ֆիզիկական անձի անունը, ազգանունը և հայրանունը (առկայության դեպքում)

4) 1.5 սյունակում լրացվում է անձի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը

5) 1.6 սյունակում լրացվում է ծննդյան ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

6) 1.7 և 1.8 սյունակներում համապատասխանաբար լրացվում են *ԱՀ-ում²⁾* (ՀՀ-ում) անձը հաստատող փաստաթղթի տեսակներից որևէ մեկը՝ *ԱՀ²⁾* (ՀՀ) քաղաքացիների համար՝ ՀՀ անձնագիր, նույնականացման քարտ, մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ *ԱՀ-ում²⁾* (ՀՀ-ում) բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ, ՌԴ քաղաքացու անձնագիր), փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ և անձը հաստատող համապատասխան փաստաթղթի սերիա և համարը

Բաժին II. Կոնտակտային տվյալներ

Հեռախոսահամար	Բջջային հեռախոսահամար	Էլ. փոստ
2.1	2.2	2.3

- 7) 2.1 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի տան (քաղաքային) հեռախոսահամարը (առկայության դեպքում)
- 8) 2.2 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բջջային հեռախոսահամարը (առկայության դեպքում)
- 9) 2.3 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)

Բաժին III. Հասցե և բնակության տվյալներ
Ենթաբաժին I. ԱՀ-ում²⁾ (ՀՀ-ում) բնակության հասցե

Շրջան (Մարզ)	Համայնք	Բնակավայր	Փողոց	Շենք/տուն	Բնակարան
3.1.1	3.1.2	3.1.3	3.1.4	3.1.5	3.1.6

- 10) 3.1.1 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության շրջանի (մարզի) անվանումը
- 11) 3.1.2 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության համայնքի անվանումը
- 12) 3.1.3 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակավայրի անվանումը
- 13) 3.1.4 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի փողոցի անվանումը
- 14) 3.1.5 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի շենքի կամ տան համարը
- 15) 3.1.6 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության վայրի բնակարանի համարը

Ենթաբաժին II. Արտերկրի բնակության հասցե

Երկիր	Հասցեատող 1	Հասցեատող 2	Հասցեատող 3	Փոստի համար
3.2.1	3.2.2	3.2.3	3.2.4	3.2.5

- 16) 3.2.1 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի բնակության երկիրը (պետությունը)
- 17) 3.2.2 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության առաջին հասցեատողը
- 18) 3.2.3 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության երկրորդ հասցեատողը
- 19) 3.2.4 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության երրորդ հասցեատողը
- 20) 3.2.5 սյունակում լրացվում է ֆիզիկական անձի արտերկրի բնակության վայրի փոստային համարը

Բաժին IV. Աշխատանքի մասին տեղեկություններ
Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ

Աշխատանքային հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
4.1.1	4.1.2

Պաշտոն			Աշխատաժամանակի ռեժիմ (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ)	Ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում շաբաթական տևողություն	Համապետությանը աշխատանք
Կոդ	Սկիզբ	Ավարտ			
4.1.3	4.1.4	4.1.5	4.1.6	4.1.7	4.1.8

21) 4.1.1 սյունակում լրացվում է գործադրուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատողի աշխատանքի անցնելու ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

22) 4.1.2 սյունակում լրացվում է գործադրուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

Ֆիզիկական անձ գործադրուի մահվան դեպքում վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների ավարտը գրանցվում է ֆիզիկական անձ գործադրուի մահվան օրով՝ հարկային մարմնի կողմից Արցախի Հանրապետության ոստիկանությունից ստացված փյալների հիման վրա

23) 4.1.3, 4.1.4 և 4.1.5 սյունակներում լրացվում են աշխատողի պաշտոնի (մասնագիտության) կողը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի փետրվարի 12-ի «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դասակարգիչ ընդունելու մասին» N 19-Ն հրամանի հավելվածի համաձայն, փյալ պաշտոնի (մասնագիտությամբ աշխատանքի անցնելու) նշանակման և փյալ պաշտոնից ազատվելու (մասնագիտության փոփոխության) ամսաթվերը (օր, ամիս, տարի): Եթե ֆիզիկական անձին վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված չէ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա հաստիքային զինծառայողի դեպքում լրացվում է համակարգում զինծառայողի և դրան հավասարեցված անձի պաշտոնին տրված կոդը և ծառայության անցնելու ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

23.1) 4.1.6 սյունակում լրացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 141-րդ հոդվածով սահմանված և աշխատանքային պայմանագրով նախատեսված վարձու աշխատողի աշխատաժամանակի ռեժիմը (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ): Ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմին չեն վերաբերում այն աշխատողները, որոնց համար, համաձայն գործող օրենսդրության (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 140-րդ հոդված), սահմանված է աշխատաժամանակի կրճատ տևողություն

23.2) 4.1.7 սյունակում լրացվում է աշխատաժամանակի շաբաթական տևողությունը, եթե վարձու աշխատողն աշխատում է ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով

23.3) 4.1.8 սյունակում է, եթե աշխատանքը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված և աշխատանքային պայմանագրով նախատեսված համատեղությամբ

Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ

Չվճարվող արձակուրդ		Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ		Երեխայի ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	
4.2.1	4.2.2	4.2.3	4.2.4	4.2.5

24) 4.2.1 և 4.2.2 սյունակներում լրացվում է գործադրուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

25) 4.2.3 և 4.2.4 սյունակներում արտացոլվում է գործադրուի կողմից վարձու աշխատողին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

26) 4.2.5 սյունակում լրացվում է երեխայի ծննդյան ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

Ենթաբաժին III. Քաղաքացիաիրավական հարաբերություններ

Քաղաքացիաիրավական հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
4.3.1	4.3.2

27) 4.3.1 սյունակում լրացվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

28) 4.3.2 սյունակում լրացվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի դադարեցման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

Ենթաբաժին IV. Սոցիալական վճարի կատարումը^{*4)} դադարեցնելու մասին տեղեկություն

Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվ (օր/ամիս/տարի)
4.4.1

29) 4.4.1 սյունակում լրացվում է կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից *սոցիալական վճարի կատարումը^{*4)}* դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

Բաժին V. Աշխատանքի մասին նախկինում սխալ հանձնված տեղեկություններ
Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ

Աշխատանքային հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
5.1.1	5.1.2

30) 5.1.1 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

31) 5.1.2 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

Պաշտոն			Աշխատաժամանակի ռեժիմ (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ)	Ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում շաբաթական տևողություն	Համապետությանը աշխատանք
Կոդ	Սկիզբ	Ավարտ			
5.1.3	5.1.4	5.1.5	5.1.6	5.1.7	5.1.8

32) 5.1.3, 5.1.4 և 5.1.5 սյունակներում արտացոլվում են նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատողի պաշտոնի (մասնագիտության) տվյալները

32.1) 5.1.6 սյունակում լրացվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված վարձու աշխատողի աշխատաժամանակի ռեժիմը (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ)

32.2) 5.1.7 սյունակում լրացվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատաժամանակի շաբաթական տևողությունը, եթե վարձու աշխատողն աշխատում է ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով

32.3) 5.1.8 սյունակում լրացվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված՝ համապետությանը կատարվող աշխատանքի դաշտում նշված տվյալը

Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ

Չվճարվող արձակուրդ		Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ		Երեխայի ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	
5.2.1	5.2.2	5.2.3	5.2.4	5.2.5

33) 5.2.1 և 5.2.2 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթիվերը՝ օր, ամիս, տարի

34) 5.2.3 և 5.2.4 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթիվերը՝ օր, ամիս, տարի

35) 5.2.5 սյունակում արտացոլվում է երեխայի ծննդյան՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի^{*3)}

Ենթաբաժին III. Քաղաքացիաիրավական հարաբերություններ

Քաղաքացիաիրավական հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
5.3.1	5.3.2

36) 5.3.1 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի կնքման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

37) 5.3.2 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական պայմանագրի դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

Ենթաբաժին IV. Սոցիալական վճարի կատարումը^{*4)} դադարեցնելու մասին տեղեկություն

Կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմելու ամսաթիվ (օր/ամիս/տարի)
5.4.1

38) 5.4.1 սյունակում արտացոլվում է կենսաթոշակային տարիքը լրացած մասնակցի կողմից *սոցիալական վճարի կատարումը^{*4)}* դադարեցնելու մասին գործատուին դիմելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին

39) Հարկային գործակալի (գործատուի) պատասխանատու անձի (անձանց) ստորագրություն(ներ)

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

«Համաձայնեցված է
 Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
 ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
 «18» փետրվարի 2014թ.
 _____ Ս. Թևոսյան

Հավելված N 2
 Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարությանն առընթեր հարկային
 պետական ծառայության պետի
 «17» փետրվարի 2014թ.
 N 5-Ն հրամանի

Ձև

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՐԿ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ____ (տարի) ____ (ամիս)	Փաստաթղթի մուտքագրման համար _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)
Հարկ վճարողի անվանում	Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝	Չափի միավոր՝ Դրամ

1. «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է հարկային մարմնում հարկային գործակալի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, «Հարկ վճարողի անվանում» տողում ինքնաշխատ լրացվում են կազմակերպության անվանումը և կազմակերպատիրավական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), իսկ «Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

Բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտ ☐

1.1. «Բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտ» վանդակում նշում կատարվում է, եթե հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողը գործունեություն է իրականացրել բացառապես գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ոլորտում:^{*5)}

ԲԱԺԻՆ 1. ԳՈՐԾԱՏՈՒԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ՝ ԸՍՏ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

Աշխատողի (այդ թվում՝ վարձու աշխատողի) նույնականացման տվյալներ			Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար						Վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստներ			Եկամտային հարկ	Սոցիալական վճար
Ազգանուն	Անուն	Հանրային ծառայությանների համարանիշ (ՀԾՀ)	Զբաղմունքների դասակարգչի կոդ	Կուրակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	Քաղաքացիա-իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն	Այլ հարկվող եկամուտ (բացի նպաստներից)	Հարկվող եկամտի նվազեցման գումար	Գործատուի միջոցներով վճարված նպաստների գումար	Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով վճարված նպաստների գումար	Ավելի վճարված նպաստի գումարի հետպահում	Հարկի գումար	
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10	1.11	1.12	1.13	1.14
								()					
								()					
								()					
								()					
								()					
								()					
								()					
ԲԱԺԻՆ 1.1. ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՈՒ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿԱՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՅԼ ՀԻՄՔԵՐՈՎ ՎՃԱՐՎԱԾ ԵԿԱՄՈՒՏ													
								()					
								()					
Սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձինք								()					x
Ընդամենը								()					

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար հարկային գործակալի (գործատուի) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկը՝ ըստ բոլոր (վարձու) աշխատողների. յուրաքանչյուր (վարձու) աշխատողի համար լրացվում է մեկ տող (անկախ հաշվետու ամսում եկամուտներ ստանալու հանգամանքից):

3. [1.1], [1.2] և [1.3] սյունակներում ինքնաշխատ լրացվում են (վարձու) աշխատողի նույնականացման տվյալները. [1.1] և [1.2] սյունակներում՝ (վարձու) աշխատողի ազգանունը և անունը, [1.3] սյունակում՝ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը):

4. [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը, [1.5] սյունակում ինքնաշխատ լրացվում է կուրակային կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը. 1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է:

5. [1.6] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, [1.7] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.8] սյունակում նշվում են (վարձու) աշխատողին վճարված [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, աշխատողներին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում են հարկվող եկամտի Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերը չգերազանցող կամավոր կենսաթոշակային վճարների գումարները՝ ոչ ավելի, քան $([1.6]+[1.7]+[1.8]+[1.10]+[1.11]) - ([1.6]+[1.7]+[1.8]+[1.10]+[1.11]):1,05$:

6. [1.10] սյունակում նշվում են հաշվետու ամսում գործադրուի միջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները, [1.11] սյունակում նշվում են հաշվետու ամսում Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով վարձու աշխատողին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները, [1.12] սյունակում նշվում են հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետ պահվող գումարները: Յուրաքանչյուր վարձու աշխատողի համար նշված սյունակներից որևէ մեկը լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Աշխատողի ազգանուն, անուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	Նպաստների և հետպահման դասակարգման կոդ	Ժամանակավոր անաշխատունակության ու հղիության և ծննդաբերության (հետպահման)		Նպաստի գումար կամ հետ պահվող գումար		
			սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)	Գործադրուի միջոցներով	Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով	Հետ պահվող գումար
Ընդամենը							

7. «Նպաստների և հետպահման դասակարգման կոդ» սյունակում նշվում է ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների տեսակը կամ հետպահման դեպքը (կոդը). 1՝ հիվանդության նպաստ, 2՝ պրոթեզավորման նպաստ, 3՝ առողջարանային բուժման նպաստ, 4՝ մայրության նպաստ, 5՝ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ, 6՝ ավելի վճարված նպաստի գումարի հետպահումը:

8. «Ժամանակավոր անաշխատունակության ու հղիության և ծննդաբերության (հետպահման) / սկիզբ (օրը, ամիսը, տարին)» և «Ժամանակավոր անաշխատունակության ու հղիության և ծննդաբերության (հետպահման) / ավարտ (օրը, ամիսը, տարին)» սյունակներում նշվում է ժամանակավոր անաշխատունակության կամ հղիության և ծննդաբերության հետպահման ժամանակահատվածը, ընդ որում՝ եթե գործատուն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստը վճարել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մարտի 14-ի N 110-Ն որոշման 5-րդ հավելվածի 9-րդ կետով սահմանված ժամանակավոր անաշխատունակության թերթիկի հիման վրա (բացակայում է ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի վերջը), ապա որպես ժամանակավոր անաշխատունակության

Ժամանակահատվածի վերջ լրացվում է յուրաքանչյուր անգամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի գործադրվին ներկայացնելու օրը՝ առանց փոփոխելու ժամանակավոր անաշխատունակության սկիզբը:

9. «Նպաստի գումար կամ հետ պահվող գումար» սյունակում նշվում են հաշվետու ամսում ժամանակավոր անաշխատունակության նպաստների վճարված գումարները կամ հաշվետու ամսում հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստի վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստի հետ պահվող գումարները:

10. [1.13] սյունակում լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.6], [1.7], [1.8], [1.9], [1.10] և [1.11] սյունակներում նշված եկամուտներից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը:

11. [1.14] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում (վարձու) աշխատողի [1.6] և [1.7] սյունակներում նշված եկամուտների հանրագումարից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերով հաշվարկված սոցիալական վճարի գումարը:

12. 1.1-ին բաժնում ըստ տողերի հարկային գործակալի կողմից անձնավորված լրացվում են դատարանի վճռի հիման վրա կամ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով վճարված աշխատավարձը, պայմանագրային եկամուտը, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստը: [1.15] տողում լրացվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվության ներքո գտնվող անձանց վերաբերյալ ամփոփ (ոչ անձնավորված) տվյալները: Սույն բաժնում յուրաքանչյուր տողը (բացառությամբ [1.15] տողի) լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Ֆիզիկական անձի ազգանուն, անուն	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	Վճարված եկամտի դասակարգման կոդ	Հարկադիր պարապորդի		Աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերության		Ժամանակավոր անաշխատունակության	
			սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)	սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)	սկիզբ (օրը, ամիսը, տարին)	ավարտ (օրը, ամիսը, տարին)

13. «Վճարված եկամտի դասակարգման կոդ» սյունակում նշվում է եկամտի վճարման հիմքը (կոդը). 1՝ դատարանի վճռի հիման վրա աշխատանքի վերականգնման դեպքում հարկադիր պարապորդի վճարում, 2՝ դատարանի վճռի հիման վրա նպաստի վճարում, 3՝ դատարանի վճռի հիման վրա այլ եկամտի վճարում, 4՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում ավարտված քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքի կատարման) դիմաց եկամտի վճարում, 5՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված աշխատողին այլ բազային եկամտի վճարում, 6՝ նախորդ հաշվետու ժամանակահատվածներում աշխատանքից ազատված վարձու աշխատողին աշխատավարձ և դրան հավասարեցված եկամտի վճարում:

14. «Ընդամենը» տողում ինքնաշխատ լրացվում են [1.6]-ից մինչև [1.15] սյունակների հանրագումարները:

ԲԱԺԻՆ 2. ՀԱՐԿՎՈՂ ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿ

Եկամտի և քաղաքացիության կող	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամուտները ստացողների թվաքանակ	Եկամտային հարկի գումար
2.1	2.2	2.3	2.4	2.5
Ընդամենը				

15. 2-րդ բաժնում տրվում է հաշվետու ամսում տվյալ հարկային գործակալի կողմից բոլոր ֆիզիկական անձանց վճարված հարկվող այլ եկամուտներից եկամտային հարկի հաշվարկը. յուրաքանչյուր եկամտի տեսակի և քաղաքացիության համար լրացվում է մեկ տող:

16. [2.1] սյունակում նշվում է հաշվետու ամսվա համար [2.2] սյունակում նշված եկամտի և եկամուտը ստացողների քաղաքացիության կողը (Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ), [2.2] սյունակում լրացվում են հաշվետու ամսվա համար հաշվեգրված այլ եկամտատեսակների գումարները (որոնք հարկվում են առանձին դրույքաչափերով), [2.3] սյունակում նշվում է ընտրված եկամտին և քաղաքացիության կողին համապատասխանող եկամտային հարկի դրույքաչափը, [2.4] սյունակում լրացվում է [2.2] սյունակում նշված եկամուտներ ստացողների թվաքանակը (հաշվարկում չի մասնակցում), [2.5] սյունակում լրացվում է եկամտային հարկի գումարը ($[2.5]=[2.2] \times [2.3]$):

17. 2-րդ բաժնում յուրաքանչյուր տողը (բացառությամբ 13-րդ տողի) լրացված լինելու դեպքում լրացվում (բացվում) է հետևյալ աղյուսակը՝

Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	Անուն	Ազգանուն	Հայրանուն	Անձը հաստատող փաստաթղթի		Մշտական բնակության վայրի հասցե	Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) ժամանակավոր բնակության վայրի հասցե	Վճարված եկամտի տեսակ (կող)	Եկամտի ընդհանուր գումար	Դրույքաչափ (%)	Եկամտային հարկի գումար
				տեսակ	սերիա և համար						

18. Ըստ տողերի հարկային գործակալի կողմից, բացառությամբ բանկային կամ ապահովագրական գաղտնիք համարվող տեղեկությունների, անձնավորված լրացվում են Արցախի Հանրապետության ֆիզիկական անձանց և Արցախի Հանրապետությունում բնակության իրավունք (կացության կարգավիճակ) չունեցող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց՝

1) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (առկայության դեպքում),

2) անունը, ազգանունը, հայրանունը (հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը լրացված լինելու դեպքում դաշտերը լրացվում են ինքնաշխատ),

3) Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացու անձնագրի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի) կամ նույնականացման քարտի, օտարերկրյա քաղաքացու, քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի, փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի, օտարերկրյա (այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության) քաղաքացու՝ անձնագրի տեսակներից որևէ մեկը, անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը,

- 4) անձը հաստատող փաստաթղթում գրանցված մշտական բնակության վայրի հասցեն (պարտադիր նշելով մշտական բնակության երկիրը),
5) Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) ժամանակավոր բնակության վայրի հասցեն,
6) վճարված եկամտի տեսակը (կողը) և եկամուտ ստացողի քաղաքացիության կողը (Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի կամ օտարերկրացի՝ օտարերկրյա քաղաքացի, քաղաքացիություն չունեցող անձ),
7) կողին համապատասխան վճարված եկամտի ընդհանուր գումարը:

Եկամտի տեսակ	Եկամտի կող	Դրույքաչափ (%)	Եկամտի կող	Դրույքաչափ (%)
	Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացի		Օտարերկրացի	
1. Ռոյալթի	001	6	101	10
2. Տոկոս	002	5	102	10
3. Շահում	003	13 ^{*5)}	103	13 ^{*5)}
4. Մրցանակ	004	13 ^{*5)}	104	13 ^{*5)}
5. Նվիրատվություն, օգնություն	005	13 ^{*5)}	105	13 ^{*5)}
6. Ապահովագրական հատուցում	006	13 ^{*5)}	106	5
7. Գույքն օտարելու դիմաց եկամուտ	007	6	107	x
8. Գույքի արժեքի հավելած	008	x	108	10
9. Վարձավճար	009	6	109	10
10. Փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	010	13 ^{*5)}	110	5
11. Ֆիզիկական անձի համար ապահովագրավճար	011	13 ^{*5)}	111	13 ^{*5)}
12. Կամավոր կենսաթոշակներ	012	6	112	6
13. Չհիմնավորված վճարումներ	013	10	113	10
14. Նվազեցման կատարման տարվան հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում չվճարված պասիվ եկամուտներ	014	10	114	10
15. Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի աշխատանքի վարձատրություն	015	x	115	13 ^{*5)}
16. Այլ եկամուտներ	099	13 ^{*5)}	199	13 ^{*5)}

ԲԱԺԻՆ 3. ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

Եկամտային հարկի գումար (հաշվարկված)	Եկամտային հարկից նվազեցվող նպաստների գումար (վճարված)	Ավելի վճարված նպաստների գումարների հերպահում	Եկամտային հարկ (վճարման ենթակա)	Սոցիալական վճարներ (վճարման ենթակա)
3.1	3.2	3.3	3.4	3.5
	()			

19. 3-րդ բաժնում տրվում են հաշվետու ամսվա համար բոլոր (վարձու) աշխատողների եկամտային հարկի և սոցիալական վճարների հաշվարկի ամփոփ տվյալները:

20. [3.1] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը ($[3.1]=[1.13]+[2.5]$), [3.2] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցներով վճարված և եկամտային հարկից նվազեցվող ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների ընդհանուր գումարը (եթե $[3.1]>[1.11]$, ապա $[3.2]=[1.11]$, հակառակ դեպքում $[3.2]=[3.1]$), [3.3] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսում ավելի վճարված հղիության և ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու դեպքում վճարված նպաստների վերահաշվարկման արդյունքում ավելի վճարված նպաստների հետ պահվող ընդհանուր գումարը ($[3.3]=[1.12]$), [3.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումարը ($[3.4]=[3.1]+[3.2]+[3.3]>=0$), և [3.5] սյունակում ինքնաշխատ լրացվում է հաշվետու ամսվա համար վճարման ենթակա սոցիալական վճարների գումարը ($[3.5]=[1.14]$):

Հարկային գործակալի (գործատուի) պատրասխանատու անձի (անձանց) ստորագրություն(ներ)

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Մ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Համաձայնեցված է
 Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
 ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
 «18» փետրվարի 2014թ.
 _____ Ս. Թևոսյան

Հավելված N 3
 Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
 կառավարությանն առընթեր հարկային
 պետական ծառայության պետի
 «17» փետրվարի 2014թ.
 N 5-Ն հրամանի

Ձև

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՇՎԱՐԿ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ _____ (տարի) _____ (ամիս)		Փաստաթղթի մուտքագրման համար _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից)	
Աշխատողի նույնականացման տվյալներ			
Ազգանուն		Անուն	
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)			
Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)			
Անձը հաստատող փաստաթղթի տեսակ		Սերիա և համար	
Հաշվարկի ներկայացման ամսաթիվ՝		Չափի միավոր՝ Դրամ	

1. «Փաստաթղթի մուտքագրման համար» մասում նշվում է հարկային մարմնում աշխատողի անձնական գործում տվյալ փաստաթղթի հերթական համարը, իսկ հետագա տողերում ինքնաշխատ լրացվում են ֆիզիկական անձի նույնականացման տվյալները. «Ազգանուն» և «Անուն» տողերում՝ աշխատողի ազգանունը և անունը, «Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)» տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, «Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)» տողում՝ աշխատողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը (սոցիալական ապահովության քարտի համարը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը), «Անձը հաստատող փաստաթղթի տեսակ» և «Սերիա և համար» տողերում՝ համապատասխանաբար ինքնաշխատ լրացվում են Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) անձը հաստատող փաստաթղթի տեսակներից որևէ մեկը՝ Արցախի Հանրապետության (Հայաստանի Հանրապետության) քաղաքացիների համար Հայաստանի Հանրապետության անձնագիր, նույնականացման քարտ, մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայական, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում (Հայաստանի Հանրապետությունում) բնակվելու իրավունքը հաստատող փաստաթուղթ (կացության քարտ, Ռուսաստանի Դաշնության քաղաքացու դեպքում՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացու անձնագիր), փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ ու անձը հաստատող համապատասխան փաստաթղթի սերիան և համարը:

ԲԱԺԻՆ 1. ԱՇԽԱՏՈՂԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂԻ) ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿ՝ ԸՍՏ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ

Գործատուի նույնականացման տվյալներ		Հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա (ստացված) եկամտի գումար							Եկամտային հարկ	Սոցիալական վճար
Անվանում	ՀՎՀՀ	Ջբաղմունքների դասակարգչի կոդ	Կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցության կարգավիճակ	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	Քաղաքացիա-իրավական պայմանագրով աշխատանքի վարձատրություն	Գործատուի միջոցներից ստացված ժամանակավոր անաշխատունակության նպաստներ	Այլ հարկվող եկամուտ	Հարկվող եկամտի նվազեցման գումար	Հարկի գումար	
1.1	1.2	1.3	1.4	1.5	1.6	1.7	1.8	1.9	1.10	1.11
Ընդամենը								()		

2. 1-ին բաժնում տրվում է հաշվետու ամսվա համար (վարձու) աշխատողի եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվարկը՝ ըստ բոլոր գործատուների (կազմակերպություն, անհատ ձեռնարկատերեր). յուրաքանչյուր գործատուի համար լրացվում է մեկ տող:

3. [1.1] և [1.2] սյունակներում լրացվում են գործատուների նույնականացման տվյալները. [1.1] սյունակում լրացվում է կազմակերպության անվանումը և կազմակերպատիրական ձևը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), իսկ [1.2] տողում՝ հարկ վճարողի հաշվառման համարը:

4. [1.3] սյունակում ինքնաշխատ լրացվում է տվյալ գործատուի (վարձու) աշխատողի զբաղմունքի (պաշտոնի, մասնագիտության) կոդը, [1.4] սյունակում ինքնաշխատ լրացվում է կուտակային կենսաթոշակային համակարգում (վարձու) աշխատողի մասնակցության կոդը. 1՝ սոցիալական վճար կատարող չէ, 2՝ սոցիալական վճար կատարող է, 3՝ դիմումի հիման վրա սոցիալական վճար կատարող է:

5. [1.5] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար տվյալ գործատուի վարձու աշխատողին հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, [1.6] սյունակում նշվում են հաշվետու ամսվա համար քաղաքացիաիրավական պայմանագրերով ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) դիմաց աշխատողին փաստացի վճարված եկամուտները (պայմանագրային եկամուտը), [1.7] սյունակում նշվում է վարձու աշխատողի ստացած ժամանակավոր անաշխատունակության նպաստների գումարները (որոնք վճարվում են գործատուի միջոցների հաշվին և բյուջեից փոխհատուցման ենթակա չեն):

6. [1.8] սյունակում նշվում են (վարձու) աշխատողին վճարված՝ [1.5], [1.6] և [1.7] սյունակներում չընդգրկված և «Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափով հարկվող այլ եկամուտները (այդ թվում՝ աշխատողին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափը գերազանցող առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերից ավելի վճարված փոխհատուցման վճարները, աշխատողին վճարված օգնության գումարները), [1.9] սյունակում նշվում են հարկվող եկամտի Արցախի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափերը չգերազանցող կուրակային վճարների գումարները՝ ոչ ավելի, քան $([1.5]+[1.6]+[1.7]+[1.8]) - ([1.5]+[1.6]+[1.7]+[1.8]):1,05$:

7. [1.10] սյունակում լրացվում է հաշվետու ամսում տվյալ գործադրուի (վարձու) աշխատողի [1.5], [1.6], [1.7], [1.8] և [1.9] սյունակներում նշված եկամուտներից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դրույքաչափերով հաշվարկված եկամտային հարկի գումարը:

